121
L. I. 2

Ի ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԷ
ՄԷԼՔՈՆԻ ՊՕՏՊՕՐԵԱՆ
ՓԱՆՓԷՆՑ

БИБЛІОТЕКИ
Мелькона Каспаровича
ПАНІЕВА.

№ 1376.

ՆՈՐ-ԴԱՐ

№ 1 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 10 Յունվարի

1885

Հինգշաբթի 10 Յունվարի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 1

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. Հատով 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միայն խմբագրատանը։

Խմբագրվելիք բաց է ամեն օր (բացի տոն օրերից) տաքը 9-ից մինչև 2-ը Տպարանական բանվորները ընդունվում են ամեն ժամում։
Տպարանը բաց է 2 կ. բնակվելիք համար՝ կրկնապատիկ։

Խմբագրության Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis. Rédaction «Nor-Dar»։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Թիֆլիսում

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1885 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՆՈՑՆ ԴԻՐՔՈՎ և ԾՐԱԴՐՈՎ

(Երկրորդ տարի)

Ծրագիրը

I. Տէրութեան կարգագրութիւններ։ II. Առաջնորդող յօդուածներ-առօրեայ ամեն տեսակ խնդիրների մասին։ III. Քրոնիկոն — լուրեր, առօրեայ անցքերի համառօտ տեսութիւններ, պատահական յօդուածներ զանազան նիւթերի վերաբերութեամբ։ IV. Թղթակցութիւններ—Կովկասից, Ռուսաստից և մի‌ւս երկիրներից։ V. Քաղաքական—Քաղաքական կեանքի և երևոյթների վերաբերեալ տեսութիւններ, յօդուածներ և լուրեր։ VI. Խառն լուրեր։ VII. Հեռագիրներ։ VIII. Առևտրական տեղեկութիւններ։ IX. Խմբագրական պատասխաններ։ X. Բանաստեղծական—Ֆէյլիէտօններ, պատկերներ, զրոյցներ, վէպեր, վիպասանութիւններ, գիտութեան, գեղարուեստների, արհեստների և արդիւնագործութեան ամեն ճիւղերին վերաբեր եղող աշխատութիւններ և քննադատական յօդուածներ։ XI. Յայտարարութիւններ—Հայոց և օտար լեզուներով։

ՏԱՐԵԿԱՆ գինն է 10 րուբլի, վեց ամսուան՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Խմբագիրը—Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

Խմբագրության Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis (Caucase) Rédaction „Nor-Dar“։

ԱՋԴ

Ներկայ 1885-ի համար «ՆՈՐ-ԴԱՐ»-ի բաժանորդագրութիւնը շարունակվում է։ Բաժանորդ են դրվում ՄԻՄՈՒՀԱՅՆ խմբագրատանը, ՊՕՍՏԱՅՆ եւ ՍԱՄԱԹԻԱ վրայ եկեղեցուն հանդէպ։ Օտարութաղաքացիք դիմում են հետևեալ հասցեով՝ Тифлисъ редакція „Норъ-Даръ“։

Բաժանորդագինն է՝ տարէկան՝ 10 ր. վեց ամսով՝ 6 ր.։ Արտասահմանում և Թիւրքիայում „Նոր-Դար“-ի տարեկան բաժանորդագինը՝ 30 Ֆրանկ է։ Առանձինները վճարում են 10 կ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.—Տարօրեայ սկզբունքը։

Քրոնիկոն. Լուրեր։ Նամակ խմբագրին։

Քաղաքական. — Հեռագրական լուրեր։

Հեռագիրներ։

Յայտարարութիւններ։

Ֆէյլիէտօն. — Բաժինքի մասին։

Թիֆլիս, 9 յունվարի 1885

ՏԱՐՈՒԱՅ ՍԿԶԲՈՒՄԸ.

—

Կիւրակի, երկուշաբթի, տօն օր, հին տարի, նոր տարի... սրանք ժամանակի անուններ են, որոնք որոշում են ժամանակները միմեանցից, բայց չեն կանգնեցնում, չեն ոչնչացնում նրան։ Ժամանակը անընդհատ առաջ է ընթանում և նրա մէջ կատարուող գործերը, երևոյթները կապուած են միմեանց հետ և կախուած ժամանակից. երկրորդ վայրկեանը առաջինի հետևանքն է, իսկ երրորդի պատճառը. մի երեւոյթ մի ուրիշ երևոյթի ներգործութեան հետևանքն է, իսկ իւր կողմից մի երրորդի պատճառը։ Պարբերական մամուլը, որ ժամանակի հարազատ զաւակն է և ժամանակի հետ ապրում է, նա նոր տարուան էլ շարունակում է միայն, նա չէ կանգնում և չէ վերջացնում։

Ուստի «Նոր-Դար»-ի այս համարը պէտք է ընդունել իբրև անցեալի շարունակութիւն։

Մենք չենք կարող ամփոփել մի համարում այն ինչ որ ապագայում լինելու է։ Ապագան ապագային թողնելով, որը մեզ համար գեռ պէտք է լինի, բայց չը կայ։ Մեզ համար գոյութիւն ունի միայն ներկան. ներկայի մէջ ապրելով ապագային ենք գիմում։

Երկրորդ տարուայ ընթացքում «Նոր-Դար»-ը հետևելով և ընդհանուր ազգերի քաղաքական և մտաւոր կեանքին, առանձին ուշադրութիւն կը գարձնէ հայ ժողովրդի կեանքի այն երևոյթների վերայ, որոնք անցեալում թերթի մէջ աննշան տեղ էին բռնում։ Թերթը հրատարակուելով հայերի մէջ և հայերի համար, իւր սկզբնական և վերջնական նպատակն էը իւր կարողութեան չափ ծառայել հայ ժողովրդի շահերին։

Որքան էլ մեր ժողովրդի կեանքում էը մի ծաղիկ գդակ։ Այսօր բաժինքի խնդիրը պակաս պայմանագրի ամենագլխաւոր տեղն է բռնում, և շատ անգամ ընտանիքումը զուարճալի ու տխուր անցքերի պատճառը դա է։ Մի այս տեսակ ընտանեկան տեսարան ցանկանում եմ նկարագրել հետևեալում։ Մտածենք մենք, եթէ դուք լինէ հետևել էք ուշադիր, պարոն Դէգրանժի տունը, Վիլլնէվ-Սէնտ-Ժօրժում։ Մօնսիեօ Դէգրանժը մի պատուելի ռանտիէ *), նստած վառարանի մօտ գրոյց է անում իւր կնոջ և աղջկայ հետ։ Ռոսակցութիւնը կենդանի է, որովհետև նա վերաբերվում է պակին։ Մի երիտասարդ արվեստիկ, Հէնրի Գրանդվալ, խնդրել է Մադելէնի ձեռքը։ Նա սիրում է և սիրվում։ Ի հարկէ այս երկու երիտասարդների պակը ամենից պարզ բան է։ Բայց Մօնսիեօ Գրանդվալ, արվեստիկի հայրը, պտրում է իւր որդուց համար մի հարս—200,000 Ֆրանկանոց, և Մոնսիեօ Դէգրանժը, Մադելէնի հայրը, ուզում է իւր ապջըկան տալ միայն—100,000 Ֆրանկ։ Թէպէտ կինը և աղջիկը ստիպում են նրան ուրացնելու, բայց նա մնում է իւր խօսքին հաստատ։

Մոնսիեօ Դէգրանժը մի գործնական, հաստատամիտ մարդ է։ Նա գիտէ իւր կամքը իրագործել։ Նրա բարի կինը պատիանում է մեղմասիրտ մայրերի այն դասին, որոնք „իմ աղջիկս“ չեն կարող արտասանել, առանց արտասուելու։ Նա խնդրում է, ազաչում է, լալիս է, բայց որովհետև մարդը անշարժ է մնում, ստանում է նա մի արդար զայրոյթ։

—„Դու սիրտ չունիս, Մոնսիեօ Դէգրանժ“.

—„Այդպէս է սիրելի կինս“։

*) Թրամագլխի եկամուտից ապրող։

ՓԷՅԼԻԷՏՕՆ

Հինը անցաւ, տարին էլ հետը, նորը գալիս է... բայց մինչէ անցածը անցել է։ Ահա մի տարին լրացաւ, պարապ, անգործ ղրջում էլ և իմ միակ պարապմունքս էը դիտել բոլորը այդ ժամանակը—թէ ինչպէս ուրիշները գործում են։ Իմ աչքիս առջևը լոյս տեսաւ „Նոր-Դար“ը և իւր Ճանապարհին ինչպէս մի նաւ ծովումը—ահ Ճակատագիր. մղդըսլնների հետ ինչու հաշիւդ կանխաւ չես տեսնում—ինոհոբրիկի հանգիպելով՝ ահա թէ ի՛նկղմիր... Ծուռ ու կոտրած մակոյկները, սանդալների վերայ սողալով հաւաքուեցան նրա շուրջը ծովային աւազակները, բայց ինչ կերպարանքները, ինչ աչքեր, ինչ գլուխներ։ Որքան էլ որ ինոհոբրիկը սարսափելի է, բայց երբ մարդ ինքը, ապահով վտանգից՝ դիտում է նրան, անկարելի է, որ նրան այդ մի դուարճութիւն պատճառում չը լինի։ Ես գոնէ զուարճանում եմ այդ ամենը տեսնելով, ուր էը թէ մի պատկերազարդ ամսագիր լինէը մեր մէջ. որքան գլուխներ կան, որոնք կարող էին զարգարել ամսագրի երեսները։ Ես գիտում եմ միայն, ինչպէս ասեցի, և տեսնում եմ, որ նաւը հասել է նաւահանգիստ—„Նոր-Դար“ը մտել է իւր երկրորդ տարեշրջանը։ Նոր տարին չնորհաւորելու համար չէ, որ ասպարէզ եմ դուրս գալիս այժմ և այդ էլ պարտական չեմ մեր խմբագրին։ Պէտք է բաց խօսեմ, ես մի վոքր ժամանակ էլ ուզում էի լռութիւն պահել, բայց ահա ինչ պատահեցաւ։ Յունվարի 8-ին երեկոյեան մտնում եմ խմբագրատուն և տեսնում եմ խմբագրական մեծ սեղանի շուրջը նստած՝ տաք տաք վիճաբանում են, իսկ սեղանի վերայ յոդուածների, նամակների ահագին կոյտեր են դրած։

—Սա ինչ բան է, ինչ բանի մասին էք վիճում, ամսոյս 10-ին համարը դուրս է գալիս։

—Ի սէրն Աստուծոյ այդ թղթերին ձեռք չը տաք, մենք արդէն սարսափում ենք թէ այդ ամենը ով պիտի կարդայ, համարը իւր ժամանակին լոյս կը տեսնի։

—Ինչ կը լինի առաջնորդողը։—Այդ դեռ յայտնի չէ, ասում է խմբագիրը, իսկ Ֆէյլիէտօնը ահա այս բանաստեղծութիւնն է, որը գրել է մի հայ տիկին և նուիրում է յունվարի 1-ին հայ կանանց, և հէնց դրա մասին է վիճաբ։ Մեր խմբագիրը ուզեցել է գալանտ լինել, դէպի անծանօթ տիկինը, իսկ ընբան նկատում են, որ այդ ոտանաւորի մէտքը թէպէտև լաւ է, բայց ոտանաւորը մշակուած չէ։ Նորից կարդում են ոտանաւորը և նրա բաղդը վճռվում է։ Այդպիսով պարապ մնացած տեղն է, որ ես այժմ բռնում եմ։ Դեռ այդ ամենը չէ։ Ինչ որ այժմ պիտի կարդայ ընթերցողը, դրա մէջ ինձանից ոչինչ չի գտնել. տարիները առաջ է գրուած այս ֆէյլիէտօնը և այդ օրը պատահմունքով թղթերի տակից դուրս ընկաւ։ Դա հին է, բայց մեր խմբագրի համար կարող է նոր թշնամիները լոյս ընդել. մեր յուսալից փեսացուներին չի գուր գալ այդ ֆէյլիէտօնը, թէպէտև մեր երկուքը Թողած Ֆրանսիայի կեանքից եմ խօսում։

***

Ժամանակ առ ժամանակ Ֆրանսիայի ակադեմիկոսները — „Ինստիտուտ-դը-Ֆրանս“ հինգ ակադեմիանները—հաւաքւում են Մացարին պալատի գահլիճը մի օրևէ առթիւ՝ մի նոր անդամ ընդունելու, գիտութեան, արհեստի կամ առաքինութեան մասին պարգևներ բաժանելու համար։ Այդ ձանձրալի ծէսին յաջորդում է մի զուարճալի տեսարան։ Վերջը ստանում է խօսքը ընկերութեան մնջից ամենասրամիտը, նա՝ որ ակադեմիկոս կոչուելու ամենաքիչ յարմարութիւնն ունի, և նա կարդում է ինչ որ մտոն ունի, մի առակ, սօնէտ, սատիրա կամ մի բլուէտ, որը ակադեմիական գաղով չը պէտք է չափած։

Այսպէս եղաւ աշնան վերջերին մի օր, երբ 20,000 Ֆրանկի պարգևը բաժանելու առթիւ՝ ակադեմիկոսները հաւաքուել էին։ Ուսումնական ընկերութեան զուարճացնողը էրնեստ Լէգուվէն էր։ Հէնց որ նա ամբիոնին մօտենում է, իսկոյն տերում է ներողներին մի առանձին շարժմունք, որը նկատելի է միշտ Թատրոններում, երբ ժողովրդի սիրածը բեմ է դուրս գալիս։ Քաչալ գլուխները սկսում են շարժել, հագել, պատրաստուել, և ուսումից ճլորած ու մաշուած երեսները վերայ երևում է մի ուրախ արտայայտութիւն։

Լէգուվէն մի Ճարտար Ճառախօս է—Ֆրանսիացին ասում է. un diseur—որի նմանը հազիւ թէ գտնուի։ Ոչ ոք նրա պէս իւր Ճառին անմիջականութիւն յատկացնելու տաղանդ չունի։ Միտքը և արտայայտութիւնը երևում են ինչպէս մի վայրկենական ձիրք, և մարդ զարմանում է, երբ միևնոյն Ճառը երկրորդ անգամ լսելով նրա միևնոյն ձայնը, միևնոյն կերպը և շարժմունքն է գտնում։ Ձայնի բարձրանալը ու ցածրանալը, տէմպօի փոփոխութիւնը, մատների ու ձեռքերի շարժումը—ամեն բան նա առաջուց ձևել, չափել, նշանակել է։ Նոյն իսկ ամենաչնչին, աննշան բանը պատահմունքին չէ թողած, բայց Ճառախօսի արժանաւորութիւնը հէնց նրա մէջն է, որ գժուարութեամբ պատրաստած Ճառը լսողի վերայ տպաւորվում է իբրև պատահմամբ գոյացած։ Լէգուվէից կարող է ամենալաւ դերասանը սովորել մի բան։ Որովհետև նա նստած է խօսում, այդ պատճառով նա միշտ մեևնոյն աթոռն է գործածում։ Երբ նա մի քանի տարիներ առաջ իւր Ճառերը տպել տուեց, նուիրեց նրանց—երևակայեցէք ձեզ—իւր կաչեաթուղին „à ma chaise de cuir!“

Աթոռը չէ որ պատերազմի ձին է, բացատրում էր նա յուսաթղթի մէջ... Նա ծանօթ և պտղաբեր մատենագիր է և շատ սիրելիներում Սիրելիի աշխատակիցն էը—բայց մեզանում նրան Ճանաչում են մի վոքր „Նոր-Դար“-ով։ Նրա մի բլուէտը „A propos d'une dot“, բաժինքի մասին, որով նա ծերունի առկադեմիկոսներին զուարճացրել է, բոլորովին դրամատիկական խորհրդով է մտածած։

Հարուստ հայրերին Լէգուվէն խորհուրդ է տալիս, իրենց աղջկանց օրական կարելի է քիչ բաժինքով Ճանապարհ ձգել, որ դրանք երբէք հայրական օգնութեան անկարօտ չը մնան։ Բայց այս վարդապետութիւնը գործադրելու համար, հարկաւոր է հարուստ լինել—դրա միակ ու չնչին պատճառութիւնը։ Ահա այստեղ է բանը, կարդացէք և հարկէ ընթերցողը զրկուած է այն գեղեցիկ կենդանի տպաւորութիւնից, որը պիտի ստանար հեղինակի անձնական, կենդանի խօսքից։ Բայց յոյս կայ, որ այս բլուէտը զգուշացնէ շատ հայրերին որոնք պատրաստուել են մի չիմարութիւն գործել և մեր սուտ կալվածներից խաբուել։

Ի ն ի ո ս

ԲԱԺԻՆԳԻ (ՕԺԻԳ) ՄԱՍԻՆ

—

Կար մի ժամանակ—նա վաղուց անցել է—որ մի աղջկայ բաժինքը կապում էր մի ծաղիկ գդակ։ Այսօր բաժինքի խնդիրը պակաս պայմանագրի ամենագլխաւոր տեղն է բռնում, և շատ անգամ ընտանիքումը զուարճալի ու տխուր անցքերի պատճառը դա է։ Մի այս տեսակ ընտանեկան տեսարան ցանկանում եմ նկարագրել հետևեալում։ Մտածենք մենք, եթէ դուք լինէ հետևել էք ուշադիր, պարոն Դէգրանժի տունը, Վիլլնէվ-Սէնտ-Ժօրժում։ Մօնսիեօ Դէգրանժը մի պատուելի ռանտիէ *), նստած վառարանի մօտ գրոյց է անում իւր կնոջ և աղջկայ հետ։ Ռոսակցութիւնը կենդանի է, որովհետև նա վերաբերվում է պակին։ Մի երիտասարդ արվեստիկ, Հէնրի Գրանդվալ, խնդրել է Մադելէնի ձեռքը։ Նա սիրում է և սիրվում։ Ի հարկէ այս երկու երիտասարդների պակը ամենից պարզ բան է։ Բայց Մօնսիեօ Գրանդվալ, արվեստիկի հայրը, պտրում է իւր որդուց համար մի հարս—200,000 Ֆրանկանոց, և Մոնսիեօ Դէգրանժը, Մադելէնի հայրը, ուզում է իւր ապջըկան տալ միայն—100,000 Ֆրանկ։ Թէպէտ կինը և աղջիկը ստիպում են նրան ուրացնելու, բայց նա մնում է իւր խօսքին հաստատ։

Մոնսիեօ Դէգրանժը մի գործնական, հաստատամիտ մարդ է։ Նա գիտէ իւր կամքը իրագործել։ Նրա բարի կինը պատիանում է մեղմասիրտ մայրերի այն դասին, որոնք „իմ աղջիկս“ չեն կարող արտասանել, առանց արտասուելու։ Նա խնդրում է, ազաչում է, լալիս է, բայց որովհետև մարդը անշարժ է մնում, ստանում է նա մի արդար զայրոյթ։

—„Դու սիրտ չունիս, Մոնսիեօ Դէգրանժ“.

—„Այդպէս է սիրելի կինս“։

*) Թրամագլխի եկամուտից ապրող։

ՀՈՒՅՍ

Ի՞նչ է հույսը։ Ի՞նչ է նա, որ ոչ միայն ամեն մարդ, այլև ամեն կենդանի ունի իր մեջ, ամեն ժամանակ, ամեն տեղ, ամեն պայմանների տակ։ Ինչո՞ւ է նա այդպիսի ուժեղ, որ ոչ մի ուրիշ զգացմունք չի կարող նրա հետ համեմատվել։ Ինչո՞ւ է նա այդպիսի անհրաժեշտ, որ առանց նրա մարդ չի կարող ապրել։ Ինչո՞ւ է նա այդպիսի անխորտակելի, որ ոչ մի ուրիշ զգացմունք չի կարող նրա հետ կռվել։ Ինչո՞ւ է նա այդպիսի անհաղթելի, որ ոչ մի ուրիշ զգացմունք չի կարող նրա դեմ հաղթական դուրս գալ։

Հույս կոչվում է մի ներքին զգացմունք, որ մարդուն ստիպում է ապագայից ակնկալել ամեն բարիք, ամեն հաճույք, ամեն ուրախություն։ Հույսը մարդուն ստիպում է ամեն դժբախտության մեջ, ամեն վշտի մեջ, ամեն նեղության մեջ, ամեն տանջանքների մեջ, ամեն հիվանդության մեջ, ամեն աղքատության մեջ, ամեն անարդարության մեջ, ամեն ստորության մեջ, ամեն անպատվության մեջ, ամեն անիրավության մեջ, ամեն անօրինության մեջ, ամեն անհաջողության մեջ, ամեն ձախողության մեջ, ամեն ձախորդության մեջ, ամեն անբախտության մեջ, ամեն անհուսության մեջ, ամեն անհույսության մեջ, ամեն անհանգստության մեջ, ամեն անհանգիստության մեջ, ամեն անհարմարության մեջ, ամեն անհարմարավետության մեջ, ամեն անհարմարանքների մեջ, ամեն անհարմարությունների մեջ, ամեն անհարմարությունների մեջ, ամեն անհարմարություն

Թիւնից 59,082 ր. կողմնակի հաբկերից 8,221 ր., զանազան եկամուտներից 32,494 ր. զինուորական հաստատութիւնների վարձելու, լուսաւորելու և նոցա պաշտպանելու համար նշանակուած տարեկան օժանդակութիւնից — 24,32 ր. ,հակադարձ եկամուտներից— (возвратные доходы) 16,300 ր. և կրկին կամուտներից (чрезвычайныхъ доходовъ) —10,800 ր.. Ամէն լինելու է 531,882 ր. Ի Թիւս նոցա՝ հասարակաց գործոց վարչութեան պահպանութեան վերայ—87,580 ր., ոստիկանութեան բժշկական մասի և բերդի պահպանութեան վերայ—87,715 ր., աւելցուկ ռոճկի և պենսիայի վերայ—8077 ր., քաղաքային հասարակաց գոյքերի պահպանութեան և քաղաքի բարօրութեան համար—132,298 ր., քաղաքային ուսումնարանների վերայ—46,945 ր., զինուորական լծկանի ուղևորելու վերայ—63,978 ր., դրամական օժանդակութեանց համար զանազան հաստատութիւններին—11,963 ր. (դպրոցներին—6,242 ր., հասարակաց մատենադարանին—1,030 ր., ջրից փրկող ընկերութեան համար,—326 ր., որբոց տեսանի պահպանութեան համար—3,985 ր. և մետաղների փորձառութեան սենեակի պահպանութեան վերայ—370 ր., և զանազան ծախսեր—9,840 ր.: Հակառակ անցեալ տարուայ տարեհաշուի, եկամուտ 8,705 ր. չափ աւելի են սպասում. ամիններից աւելի շատ սպասում են Մնացականեան և վերայի կամուրջների եկամուտներից և գնահատութեան հաւաքածներից։

Ման լինելու է 8,371 րուբլու չափ աւելի անցեալ տարուանից. ծախսի չատութիւնը այս տարի մեկնվում է, գլխաւորապէս, հաշուեպահի երկու օգնական և մէկ երկրաչափ (землемѣръ) աւելանալովը, այլև քաղաքի վերստին գնահատութեան համար նշանակուած յանձնաժողովի անդամներին ուղեկինները նշանակելովին։ Ընդհանուր եզրակացութիւնը այս է 1886 տարուայ եկամուտը ծախսի հետ համեմատած՝ եկամուտ հաշուած է 543,935 ր. և ծախս 531,882։ Քաղաքային վարչութիւնը պահպանացրեց եկամուտը 10,000 րուբլով, այնպէս որ ծախսը եկամուտից հանած 3000-ից պակաս կը լինի աւելին։

—

„Կովկաս“ լրագիրը լսել է, որ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը մտադիր է Թոյլտուութիւն խնդրել կառավարութիւնից, գիւղատնտեսական աշխատանքէս բանալու թիֆլիսում այս տարուայ աշնանը։ Աշխարհահանդէսի ընդհանուր ծրագիրը կազմելը յանձնուած է Ն. Ն. Շավրովին և թէ այս հարցը ընկերութեան մտատկայ նիստերից մէկում քննութեան առարկայ կը դառնայ։

—

Վրաց „Դրոէբա“ լրագրին հաղորդում են, որ „Իմէդի“ (Յոյս) ամսագրի խմբագիր-հրատարակիչ Միքայէլ Դուրգենիձէն այս օրերումս վանճանուեցաւ։ „Իմէդին“ յայտնի էր նրանով մանաւանդ, որ պարունակում էր տա հայերէն ուղղուած հայհոյանքներով լի յօդուածները։

—

„Դրոէբին“ հաղորդում են, որ Գորու նահանգում տարածուած են շատ ծաղկացաւը և ուրիշ զանազան տեսակ հիւանդութիւններ, որոնց վերայ ուշադրութիւն չէ դարձնում տեղական վարչութիւնը։

—

„Նոր-Խարս“-ի խմբագրութիւնը և նրա խմբագիրը հրապարակով յայտնում են իրենց խորին շնորհակալութիւնը այն ամեն յարգելի անձինքներին, որոնք Թիֆլիսում քաղաքային պոստով ուրիշ տեղերից հեռագիրներով կամ նամակներով շնորհաւորել են նոր տարին և „Նոր-Դար“-ի երկրորդ տարեշրջանը։

—

Խարգախութիւնների մէջ մեղադրուած Ա. Ս. Ղորղանովի, Ս. Մ. Տէր-Մկրտչեանցի, Ֆ. Մ. Սիմեոնովի և Մ. Մ. Տէր-Շմաւոնեանցի գործը, որի քննութիւնը նշանակուած էր Թիֆլիսու նահանգական դատարանում յունուարի 7-ին, յետաձգուեցաւ $^2/_3$ կանչուած վկայների չը ներկայանալու պատճառով, մինչև ցնոր կարգադրութիւն։

—

Պ. պ. Անանեանց և Գասպարեանց բժիշկների գործը, ինչպէս լսել է „Тиф. Объяв.“ քննուելու է յունվարի 11-ին Թիֆլիսու երկրորդ բաժնի հաշտարար դատաւորի մօտ։ Այս գործի առթիւ երեք էքսպերտ են նշանակուած։

ԹՄԲԱԴՐՈՒԹԻՒՆ

—

„Վերին-Ագուլիսի հեղեղից վնասուած աղքատ ընտանիքների օգնող մասնաժողովը“ ստացաւ հետևեալ նուիրատուութիւնները՝ էջմիածնից ընդ ձեռամբ գեր. Գրիգոր եպիսկոպոս Աղաւնիրեանցի երկու հարիւր եօթանասուն վեց րուբլի չխսուն կոպէկի, որը ստացել է գեր. Աղաւնիրեանցը Ասորեստանու հայոց վիճակային կոնսիստորիայից գեր. Սուքիաս եպիսկոպոսի տնօրէնութեամբ ժողոված։

Ասորեստանից՝ 215 ր. 50 կ.

Պետրովսկից՝ 15 րուբլի.

Եկատերինոդարայ գործակալ Մեսրովբ քահանայ Լազարեանցի ժողոված 46 րուբլի։

Մասնաժողովս յայտնում է յարգելի նուիրատուներին իւր խորին շնորհակալութիւնը։

„Մասնաժողովս“ խնդրում է տեղ տալ Ձեր պատուական լրագրի մէջ։

Անդամ Յարութիւն Հախնազարեանց.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ „ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

1 Յունվարի.

Պետերբուրգ. Երեկ Նոցին Կայսերական Մեծութիւնները օգոստափառ զաւակներով բարեհաճեցին տեղափոխուել Գատչինոյից դէպի Պետերբուրգ, և Նոցին Մեծութիւնները և բարձրութիւնները շնորհաւորութիւնները այսօր ընդունեցին Զմեռային պալատում։

Լսւում է, որ արքունիքում 4 պարահանդէս կը լինի։

Մեծ Իշխան Միքայել Նիկոլայէվիչը հաստատուած է պետական խորհրդի նախագահի պաշտօնի մէջ և այս 1885 Թուականի համար։

Ծերակոյտի անդամ Գոլոհվոֆ պետական խորհրդի անդամ է նշանակուած և միևնոյն ժամանակ նախագահ ստատս—սեկրետար Կախանովի տեղ, նոյն խորհրդի յանձնաժողովի, որ կանխապէս քննում է յանուն Նորին Կայսերական Մեծութեան մատուցած բողոքները ընդդէմ Ծերակոյտի որոշումների։

Արևելեան Սիբիրեայի ընդհանուր նահանգապետը (գեներալ—գուբերնատոր) արձակվում է այս պաշտօնից և Ծերակոյտի անդամ է նշանակվում։

Պատրաստվում է նախագիծ, որ այսուհետև Թոյլ տրվի առաջին երկու կարգի կամաւոր զինուորականներին սպայի աստիճան ստանալու մէյն մի կամ երկու տարի ռազմագիտական ուսումնարաններում մնալուց յետոյ։

Իրկուտսկ. Երեկ այստեղ զգալի երկրաշարժ պատահեցաւ։

Պենսկ. Ապրանքի և ճանապարհորդների գնացքը երկաթուղով սկսուեցաւ Պոլեսի ճանապարհներին վերնոյից մինչև Պինսկ, իսկ մինչև Ռոլնոն սկսվելու է յուլիսից ոչ առաջ։

Պետերբուրգ. Ներքին գործոց մինիստրի օգնական Դուրնովո պետական քարտուղար է նշանակուած. Ալեքսեմիկոս Բեզոբրազովը—Ծերակոյտի անդամ։

Կեանատա. Այսօր այստեղ երկրաշարժ պատահեցաւ։

Օդեսսա. Անցեալ տարուայ ընթացքում այստեղից դուրս է տարած արտասահման 12 միլիոն պուդ զանազան տեսակ ցորեն և 300 հազար պուդ բուրդ, իսկ տարուայ մէջ մագազիններից և նաւերից գնուած է այստեղ, բացի չոգեկառքերով եկածից, 3,925,000 չետվերտ ցորեն. մնում է ամբարներում 983,000 չետվերտ ցորեն. Եգիպտոսում ռուսական սպիրտի (ոգի) վաճառելը հեշտացնելու համար նաւագնացութեան ռուս ընկերութիւնը Օդեսայից մինչև Ալէքսանդրեան տանելու տարիքը պակասացրեց։

2 Յունվարի.

Պետերբուրգ. Յունվարի 8-ին և 9-ին, մինչգագային և ռուսական արտաքին վաճառականութեան բանկերում, նմանապէս և Բերլինի բանկում դեղչի բանկում „Ուչիտ“ և իւր որդիք Ֆրանկ-Ֆուրտ-Մայնի-վերայ“ բանկային տանը բացվելու է ստորագրութիւն Վլադիվավկազեան երկաթուղու ընկերութեան՝ կառավարութիւնից միանգամայն երաշխաւորեալ, 4% վոխառութեան, 20,531,500 րուբլու մետալիք գումարի, որ նշանակուած է գբլխաւոր գծի և դեպի Նովօրոսսիսկ տանող Ճիւղի շինութեան ծախսերը ծածկելու. վերջին գծի գործունէութիւնը $3^1/_2$ տարուց յետոյ պէտք է սկսվի։ Ստորագրութիւնը որոշուած է $^{10}/_{00}$ (?)% օրլիգացիայի գինը կը լինի 125 ր. մետալիք, կամ 480 մարկ։

Ֆրանկ-Ֆուրտ-Մայնի-վերայ. Ոստիկանութեան խորհրդական պ. Ռումպֆը, որ յայտնի է իւր գործունէութեամբ ընդդէմ ընկերավարական-ների, (սօցիալիստների), երեկ երեկոյեան իւր տան առաջ սպանուեցաւ, սպանողները գտնուած չեն։

Բերլին. Ըստ կիսապաշտօնական աղբիւրի՝ դիտաւորութիւն կայ ներս բերելու մաքսը ցորենի և վարսակի վերայ եռապատկելու, հաճարինը կրկնապատկելու։

Ֆրանկ-Ֆուրտ-Մայնի-վերայ. Ռումպֆը սպանուեցաւ դաշոյնի երկու հարուածից սրտի մէջ. նա չէ կողոպտուած. կարծում են, որ սպանութեան չարժառիթը վրէժխնդրութիւնն է. սպանողներին ձեռբակալելու համար նշանակուած է 3000 մարկ։

—

1885 Թուականի յունվարի 2-ին ներքին առաջին փոխառութեան տոմսերի տիրաժում տարած գումարները.

(Հիւսիսային հեռագրական գործակալութիւնից)։

№№ սերի.	№№ տոմ.	Տարած գումար
16,394	32	200,000
2,385	8	75,000
7,145	9	40,000
2,810	8	25,000
16,574	4	10,000
18,037	19	10,000
13,634	21	10,000
8,326	16	8,000
3,213	35	8,000
13,811	2	8,000
4,143	46	8,000
14,572	1	8,000
11,406	33	5,000
18,062	7	5,000
6,946	32	5,000
12,362	50	5,000
14,420	22	5,000
1,256	24	5,000
13,510	27	5,000
4,607	15	5,000
8,213	22	1,000
9,943	42	1,000

---

inpartibus - անգործ։ Արհեստագէտների մէջ արհեստականները ամենից անբաղդ են։ Բանաստեղծը, որչափ որ աղքատ լինի, գտնում է մէյտ մի գրիչ՝ իւր ոտանաւորները գրելու, երաժիշտը նոտային Թուղթ՝ իւր եղանակները խաղելու, նկարիչը վրձին և կտաւ՝ իւր մաքերը բռնելու, բայց աղուս ու քար և չէնքի համար գետին, այդ չը կայ à discrétion։ Արհեստկը ունի մի արհեստ, բայց մէջոցները չը կան նրան գործ դնելու։ Այսպէս էր պատահել գոնեայ մեր երևտասարդ վեսային։ Նրա բիւջէն բաղկանում էր իւր և իւր կնոջ դրամագլխի եկամուտներից—յարգելի եկամուտ մի բուրժուայի համար, բայց սակաւ մի արհեստագետի համար։ Արհեստ սիրելը խիստ Թանգ է նստում։ Կարծես Թէ այս ամենը բաւական չէր, Հէնրին իւր կնոջ վերայ դեռ սիրահարուած էլ էր և կարող չէր բացատել նրա ոչ մի խնդիրը։ Երեք տարուայ մէջոցում, երևտասարդ պատկուածները Թոյլ էլեն տուել իրենց և այդ շռայլութիւնը. նրանք ունէին մի տղայ և մի աղջիկ—կարճ՝ Հէնրին անդադար փողի նեղութեան մէջն էր։ Մադամ Դէգրանժը ամեն օր իւր ամուսնոյն ստիպում էր։

—,,Սիրելի ընկեր“, ողբում էր բարի կինը, „աւելացրու նրանց փողը գոնեայ մի քիչ։ Կարող ես մի Թէթէ քո օրդիքը տեսնել նեղացած։

—,,Նրանք նեղացած են“,

—,,Սարսափելի կերպով, իմ ընկեր“,

—,,Աւելի լաւ։ Իմ վեսան հիմայ մի մուշտարի գտնելու վերայ կը մտածի“,

—,,Նրանք հիմայ մի բեռ աւելի ունին“,

—,,Դու ուզում ես ասել մի բաղդ աւելի“,

Մադամ Դէգրանժը բարձրացրեց իւր ձեռքերը դէպի երկինքը և Աստուածաշնչի ամեն անեծքները Թափեց իւր ամուսնու գլխին։ Իսկ սա իւր Ճիգն ունէր, զայրացած մատրոնին մեղմացնելու։

—,,Մի քիչ հանգիստ խօսենք իմ բարի կինս. դևենք Թէ ես իմ աղջկայ բաժինքը կրկնապատկել էլ, ինչպէս որ դու ցանկանում էիր—ինչ կը լինէր հիմայ։ Իմ պարոն վեսան մի արհեստագէտ է և վող պահելը չը գիտէ։ Մեր օրդիքը այսօր աւելի հարուստ չէին լինիլ, իսկ ես այսօր չատ բանով աղքատ. ես չէի կարող նրանց այսպէս լաւ ու երկար պահելու հիւրասիրել, ինչպէս որ հիմայ լինում է—նրանք արդէն չորս ամիս է մեզ մօտ են իրենց երկու օրդիներով և երկու ծառաներով։

—Դու գուցէ ուզում ես նրանց արտաքսել, անաստուած... Սա ուզում է իմ երեխերքս իմ տանից դուրս անել։ Մի վայրկեան, որ...

„Այդ ես ամենևին չեմ ցանկանում, que diable! Ես ընդհակառակն շատ կը տխրէի, եթէ նրանք մեզ մօտ քիչ գային, որովհետև իրենց տանը ամեն բան լաւ կունենային։ Մտածիր, ամենաթանգագինս, եթէ մեր օրդիքը մեզանից հարուստ լինէին, այն ժամանակ իմ աղջկայ համար Վիլլենվ-Սէնտ-Ժօրժում աշխան խոնաւ կը լինէր, նրա որդուցը մառախուղը վնասակար կը լինէր և իմ փեսային մահու չափ կը յոգնեցնէր մէյտ երկաթուղով Փարիզ գնալն ու վերադառնալը։ Այդ պատճառով ասում եմ ամեն հայրերին, որոնք պատկելու աղջիկներով բաղդաւորուած են։ Ուզում էք, որ ձեր օրդիքը ձեզ մնան, պահեցէք ձեր փողը. ուզում էք ձեր Թոռները վայելելու, պահեցէք ձեր փողը։ Փողով՝ հայրը մնում է ընտանիքի գլուխ, հայրական տունը մի ապաստարան է. ծերերի համար պատուի և բարեկեցութեան, երիտասարդների համար օգնութիւն և ուրախութիւն գըտնելու տեղ։ Անուանիը իմ վարուելս ինչպէս որ կամենաս, ես ընդունում եմ այս իրրև Ճշմարիտ հայրական սէր, որը որդուց բաղդաւոր է անում։ Ասելիքըս է. իմ աղջկայ բաժինքի վերայ մի սուր էլ չեմ աւելացնիլ։“

***

Տասնու չորս օր անցաւ։ Ուրախութիւնը տիրում է պարոն Դէգրանժի տանը, այդ օրը կատարվում է նրա երեսԹէ պսակը—25 տարուայ պսակը։ „Կին“, ասում է մարդը իւր ամենաքաղցրիկ ժպիտով, „այս օրը պէտք է ուրախ կատարենք։ Ընթրիքի համար ոչինչ մի խնայիր, երևակայիր, ես մի չատակեր եմ... Իմ աղջկանս, որ իւր մարդու հետ փարիզ է գնացել—չը գիտեմ ինչ գործով—ասել եմ տուել, որ երեկոյեան չոգեկառքով այստեղ լինին։ Աղջիկս կը գտնէ իւր սենեակում իրեն համար մի նոր հագուստ։ Եւ դու, սիրելի կինս, զարդարիր այսօր քեզ մի փոքր... Ինձ համար ուրախութիւն է... Իմ ողորմածհոգիմօր ադամանդները վերադ դիր, նրանք ինձ չէ չեցնում են ինձ համար ամենաթանգագինն, որը ես այս երկրիս վերայ ունեցել եմ... Եւ պարոն Դէգրանժը հեռացաւ իւր արտօնքները Թագցնելու... Բայց ինչու մադամ Դէգրանժը նրան պատասխան չը տուեց. ինչու իւր գլուխը կախ գըցեց. ինչու լալիս էր նա իւր աղջկայ հետ, երբ նա չետ եկաւ. ինչու փեսան այնպէս մուԹ ու տխուր էր նայում. ինչու երեքն միասին սարսափեցան, երբ զանգը նրանց ընթրիքի հրաւիրեց. ինչու վերջապէս պարոն Դէգրանժը զայրացած ու բարկացած կանչեց, երբ մադամ Դէգրանժը ներս մըտաւ, „Ո՞ւր են քո ադամանդները“, գոռում էր նա, և պատասխանի տեղ ընկաւ մադամ Դէգրանժը նրա գիրկը, իսկ աղջիկը զայրացած հօր ոտքերին, „Ո՞ւր են քո ադամանդները“, կանչեց ծերը կրկին անգամ աւելի կոշտ եղանակով... „Դու չես պատասխանում, ուրեմն ես պէտք է ասեմ։ Դու նրանց ծախել ես, ծախել քո վեսայի ԹեԹևամտութիւնը վճարելու։ Այո, նա այնպէս լծմար էր, որ անհնին գործերի մասնակցելու, վկայ կանգնելու մի քանի սրիկաների համար, որոնք իրեն խաբեցին, և նրա պարտքերի կէսը վճարելու համար—նա պարտ է դեռ 12,000 Ֆրանկ—դու իմ մօր Թանգագին չիշատակը խլեիր ինձանից, դառնացրիր իմ այսօրուայ ուրախութիւնը“։ Մադամ Դէգրանժը ներողութեան համար խօսքեր էր պատրաստում. „Բաւական է“, ընդհատեց նրան մարդը կարճ ու կոշտ, „սուալը Թող բերեն, սեղանի նստեցէք“։ Մայրը և որդիքը լուռ հնազանդեցին։ Յանկարծ մադամ Դէգրանժը աղաղակում է բարձրաձայն, նոյնը կրկնում է փեսան, և երկուսը միատեղ աչքերը լիքը արտասուքով ընկնում են Մօնսիեօ Դէգրանժի գերկը... Մայրը գաել էր անձեռոցի (սերվիէտի) տակը իւր ադամանդները, փեսան իրեն դեռ պահպատող 12,000 Ֆրանկը... Օ՛հ, իմ ընկերս“—,,իմ հայրս...“, ,,Լաւ, շատ լաւ աշխատում էր Մօնսիեօ Դէգրանժը նրանց հեռացնել, „այդ ուրիշ, դուք այսուհետև ինձ եսական չէք անուանիլ։ Ես իրաւունք ունէի, Թէ ոչ, և հիմայ հասկանում էք, որ հայրը մէյտ աւելի հարուստ պէտք է լինի, քան օրդիքը, եԹէ այդ հարկաւոր լինէր մէյն—այո, եԹէ այդ հարկաւոր լինէր մէյն ձեզ ձեր նեղ ընկած տեղից հանելու համար։ Բայց լաւ գիտացիր, իմ պարոն վեսայ, այդ հանգաը ինձ հետ երկրորդ անգամ մի անիր, ես իմ կողմից ասում եմ որ ես չեմ կարող կրկնել այդ։

14,971	6	1,000
8,492	29	1,000
15,959	8	1,000
4,823	2	1,000
6,657	32	1,000
19,862	42	1,000
15,367	31	1,000
538	37	1,000
15,247	11	1,000
16,463	25	1,000
19,919	37	1,000
12,617	20	1,000
898	45	1,000
18,263	46	1,000
1,998	36	1,000
2,456	2	1,000
11,942	15	1,000
6,891	41	1,000

3 Յունվարի.

Պետերբուրգ. Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ծաւալման մէջ հաշուող գեներալ-մայոր Նովիկով նշանակուած է Պետերբուրգի ուսումնառական շրջանի հոգաբարձու։

Հելսինգֆորս. Երեկ Հանդիսաւոր Ֆինլանդական երեսփոխանական ժողովը (սէյմ) բացուեցաւ. այսօր ընտրութեանց վերաստուգութիւնն է կատարվում, իսկ վաղը առաջին նիստը կը լինի։

Եօկահամա. Դժուարութիւնները Կորէում խաղաղութեամբ վերջացան. Խաղաւորը համաձայնուեցաւ ձգտելու պահանջները կատարելու։

Փարիզ. Պատգամաւորների ժողովի երեկուան նիստի մէջ Ֆերրին, Դիւվալի հարցապնդմանը պատասխանեց, որ կառավարութիւնը ուսեց պատերազմի յատակագիծը պարլամենտի կամքի համաձայն, որ աւելի ազդու միջոցներ գործ դնել էր պահանջում ընդգէմ Զինաստանի և վճռեց գրաւել ողջ Տօնկինը. բայց պատերազմական մինիստրը, չը համաձայնուելով մինիստրութեան հայեացքների հետ, հրաժարական տուեց. սրա հետ միասին Ֆերրին հեռքեց այն լուրը. որ իբր Թէ Կամպենոն յայտնել է տարակուսանք, որ պատերազմի շարունակելը կարող է Ֆրանսիայի պատերազմական ոյժը Թուլացնել Եւրոպայում, և Թէ նոր պատերազմական մինիստր Լեվալ երաշխաւոր է եղել, որ Տոնկին ուղարկելիք զինուորական օգնութիւնները չեն վնասելու Ֆրանսիական զօրքի գանակութեան Եւրոպայում։ Պատգամաւորների նիստերը մինչև յունվարի 25 յետաձգուած են։

Վիեննա. Ֆրանկֆուրտում պատահած Ռոմանովի սպանութեան առիթ մասին նշանաւոր օրգանները պահանջում են միջազգային համաձայնութեամբ ընդհանուր միջոցներ գործ դնել ընդդէմ անիշխանականների միջազգային շարժողութեան։

Բերլին. Այսօր պրուսական երեսփոխանական ժողովը (սէյմը) բացուեցաւ գահային Խառով, որ նուիրուած է առաւելապէս Ֆինանսական գործերին. Խառը մատնացոյց է անում, որ մուտքը 20 միլիոնի չափ աւելացել է կառավարութեան ձեռքը բաղմաթիւ եկամտուղիների անցնելու պատճառաւ. խօսում է և միւս ճանապարհների ձեռք բերելու մասին և նմանապէս ցոյց է տալիս գիւղատնտեսութիւնը ծանրաբեռնող հարկերը թեթևացնելու կարևորութեան վերայ։

4 Յունվարի.

Խարկով. Փետրվար ամսին այստեղ հինգերորդ էնտոմոլոգիական ժողով կը կայանայ. այս ժողովին կը մասնակցեն Մենետրիով, Պոլչինսկի, և այլ գիտնականները։

Վարշավա. Երեկ վանճանուեցաւ լեհացի յայտնի բանաստեղծ, Միցկեվիչի բարեկամն, Անտոն-Եգուարդ։

Շանխայ. Կորէյի համաձայնութիւնը Ճապոնայի հետ կայանում է հետևեալումն. Կորէյան վճարում է 509,000 տէլ երբն սպատերազմական տուգանք, իսկ Ճապոնիան Սէուլում քաղաքապահ զօրագունդ կը պահի 1500 մարդուց բաղկացած։

Պետերբուրգ. Գեներալ-մայոր գրաֆ Իգնատիեվ Արևելեան Սիբիրեան գեներալ-գուբերնատոր և Իրկուտսկ զինուորական շրջանի հրամանատար է նշանակուած։

Լուր է տարածուած, Թէ այս օրերումս 27 միլիոն վոզ Թղթադրամ սէկտէ այրուի։

Ֆինլանդիայի երեսփոխանական ժողովում (սէյմ) կը ներկայացնի հրեաների իրաւունքները վերաբերեալ օրէնքների մի նախագիծ։ Մտադիր են հրեայներին Թոյլ տալ ապրել անցաԹուղթ ունենցած, արհեստներով պարապել, ամեն անգամի համար առանձին Թոյլտուութիւն ստանալ անշարժ կալուածքներ ձեռք բերելու համար քաղաքներում, բայց ոչ գիւղերում. այն հրեայն, որ 10 տարի ապրել է Ֆինլանդիայում և ոչինչ վատ բանի մէջ չէ նկատուած, ապրելու անցաԹուղթ է ստանում մինչև ցմահ, բայց մի քանի յայտնի պատճառներով այնուամենայնիւ կարող է արտաքսուել։

Բաթում. Երէկ այստեղ վախճանուեցաւ նորին պայծառափայլութիւն իշխան Իլիա Գրուզինսկի, վերջին առաքայորդու Թոռն։

Փարիզ. Ցայտնի գրող, Էդմոնդ Ա-բուն վախճանուեցաւ։

Ընդդէմ անգլիական նախագծին մեծ տէրութիւններից ներկայացրած առարկութիւնները եգիպտական Ֆինանսների կարգադրութեան հարցին վերաբերեալ, առիթ են դառնում Եգիպտոսի հարկատուութեան ոյժը Ճիշտ հետազոտութեան ենԹարկելու եւրոպական հսկողութեան ներքոյ, պարտատէրների իրաւունքները որոշելու նպատակով։

Ն ի ւ-Յ ո ր ք. 1884 Թ. ամենատատ տարին էր Միացեալ Նահանգներում. սպիտակը հասնում էր 1,795 րուբլու, ցորենը—543 և վարսակը 583 միլիոն բուշելի։

7 Յունվարի.

Հելսինգֆորս. Այսօր հանդիսաւոր կերպով Ֆինլանդիայի երեսփոխանական ժողովը (սէյմ) բացուեցաւ. մաղԹանք կատարելուց յետոյ ժողովրդի գանազան դասակարգերը, սենատորները, ռուս և Ֆին տեղական վարչութիւնները սիրիսարական պատասխան ժողովուեցան. գեներալ-գուբերնատորը կանգնելով գահի պատուանդանի մօտ, կարդաց գահական Խառը, որ յետոյ շվեդ և Ֆին լեզուներով կրկնուեցան. տնտեսական, ասպետական, հոգևորական և շինական դասակարգերի ներկայացուցիչները յայտնեցին առանձին առանձին Խառերով երբեմն բաւականութիւնը սէյմի բացման առԹիւ. սենատոր Մոլանդեր նորին կայսերական Մեծութեան առաջարկութիւնները կարդաց սէյմի առաջ Ֆին և շվեդ լեզուներով, իսկ լանդմարշալը ,,ուռաա'' գոչեց ի պատիւ Կայսեր։

Մոսկուա. Դմիտրովկու գաւառի Վաղնեսենսկու Թղթէ գործարանում անկարգութիւնները տեղի ունեցան աշխատութեան օրերի Թիւը պակասեցնելու պատճառաւ, որով բանւորների պայմանաւորեալ վաստակը պակասում էր. մշակները Թողեցին իրենց աշխատութիւնները և գործարանը զադարեց։ Նահանգապետը գնաց գործարանի տեղը և 200 կազակ զօրք ուղարկ յուեցաւ։ Եկաւոր մշակներին, որոնք ւ սմամբ էին գոում, հեռացրին և գործարանի վարչութեան Թոյլ տուեցաւ ւ Ղակների պահանջներին բաւականուե Իւն տալուց յետոյ, սկսել աշխատուԹիւնները։ Վարչութիւնը կատարեց պահանջները և աշխատութիւնները ոկ սուեցան։

Խ ա բ կ ո վ. Ծննդեան տօնական Խառը բացուեցաւ. ապրանքներ են գալիս։

Ն ի ւ-Յ ո ր ք. Իլլինոյս նահանգում գժատան հիւանդանոցը այրուեցաւ, որից մեռան 17 հոգի։

Պետերբուրգ. Սատրագրութիւնները վարժարանների երկաԹուղու օրլիգացիաների վրայ Պետերբուրգում հասան մինչև 45,500,000 րուբլուն երկու անգամ աւելի պահանջած գումարից. սատրագրութիւնը այսօր առաւօտեան վախուեցաւ։

Մտադիր են Տօմսկում գաղԹականութեան համար գրասենեակ հաստատել։

Հելսինգֆորս. Ֆինլանդիայի ժողովրդական դասակարգերին ուղղուած Կայսերական Խառը բաւականութիւն է արտայայտում ժողովրդական լուսաւորութեան և տէրութեան տնտեսութեան առաջադիմութիւնների առԹիւ և յայտնում է, որ Նորին Մեծութիւնը բաւական է Ֆինական զօրքերից, որոնք իրենց կոչման համապատասխան են։ Ալա գահական Ճառում ասուած է, որ Ֆինլանդիայի եկամուտները ենԹադրուած տարեհաշուից այնքան աւելացան, որ աւելորդը կարելի կը լինի գործածել շատ զանազան հասարակական շինուԹիւնների վերայ, որ կը յետաձգուի պահեստի գումարը (резервный фондъ) ի նկատ առած ապագայ Ֆինանսական դժուարութիւնները և նախապատրաստել հարկերի նուազումն։ Սէյմի առաջարկութիւնների կարգում գտնւում են օրէնքների հետևեալ նախագծերը. անտառների, մասնաւոր բանկերի մետրիքական սիստեմայի ընդունելու մասին, փոստային պահպանդական դրամարկղի հաստատութեան մասին տէրութեան հսկողութեան ներքոյ և մի քանի երկաԹուղիների շինուԹեան մասին։

Լոնդոն. Ռուսաց և Աւստրիացւոց դեսպանները երեկ յանձնեցին Դանվիլին իրենց կառավարութիւնների պատասխանները Եգիպտոսին վերաբերեալ անգլիական առաջարկութիւնների մասին։

8 Յունվարի.

Կիև. Ինեպր գետի նաւագնացութեան ընկերութեան գերեկտոր Դոսլպել մայերը, որ մեծ գումար վատնելու մէջ մեղադրվում էր և Կիեվից փախել էր, Աւստրիայից նամակով յայտնում է քննչին, որ այս օրերումս կը վերադառնայ իրեն արդարադատութեան ձեռքը յանձնելու։

Բերլին. Վիլհելմ կայսրը հիւանդացաւ և անկողնի մէջ պարկած է։

Մանհէյմ. Այսաեղի շրջակայքում բռնուեցաւ մի մարդ, որ շատ նման է երևում Ռումպֆի կարծեցեալ սպանողին. ձերբակալելու ժամանակ նա ըեվոլվերը արձակեց ժանդարմի և բնակիչներից երկուսի վերայ։

Վենա. Պատգամաւորների ժողովում առաջարկուած են օրինաց նախագծերը ընկերավարականների (սոցիալիստների) և ճայթող հիւթերի գործածութեան դէմ գործադրելի միջոցների մասին։

Փարիզ. Այն լուրը, որ երբեմն Տաճկաց արդարադատութեան մինիստրը եկաւ այստեղ, Ֆրանսիայից համաձայնութիւն ստանալու համար Խեդիվին վայր գցելու, ճիշդ չէ։ Ֆեմա փաշայի կոչումն է բանագնացութիւնները սկսել Տաճկաց երկաԹուղիները Աւստրական երկաԹուղիների հետ մրելու մասին։

Լոնդոն. «Times» ստատ քը խօսում է Ֆրանսիայի առարկութիւնների գէմ եգիպտական Ֆինանսների հարցը սիրով վերջացնելու առԹիւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ.

8 Յունվարի.

—

Լօնդօն—25 $^{5}/_{32}$, 25 $^{9}/_{32}$։ Համբուրգ—214 $^{3}/_{8}$, 214 $^{1}/_{2}$։ Փարիզ—264 $^{1}/_{2}$, 264 $^{3}/_{4}$։ Պօլուիմպերիալը—7 րուբ. 85 կոպ. սակարկ.։ Մաքսատան կուպոնները—7 ր. 83 կ. սակարկ։ ԱրծաԹը -1 ր. 31 կ. սակ.։ Բօրսային դիսկոնտները—6 $^{1}/_{8}$ և 6 $^{1}/_{4}$ %։ Պետական բանկի 5% տոմսեր. 1-ին շրջանի—97 $^{3}/_{4}$ ր. սակարկ. 2-րդ—97 ր. 37 կ. սակարկ. 3-րդ—97 $^{1}/_{4}$ ր. գնած, 4-րդ—97 $^{1}/_{2}$ ր. 37 կ. վաճառ. 5-րդ—97 $^{1}/_{4}$ ր. սակարկ։ Արևել. փոխառութեան 100 և 1000 րուբ. 5% տոմսեր. 1-ին շրջանի—96 ր. 87 կ. գնած, 2-րդ — 97 ր. սակարկ., 3-րդ —97 րուբ. սակարկու.։ Վիճակահանութեան տանող 5%, տոմսեր. 1-ին շրջանի 216 ր. կ. սակարկ., 2-րդ—211 $^{1}/_{2}$ ր. սակարկ, 5 $^{1}/_{2}$ % բենտեր — 101 $^{1}/_{2}$ ր. սակարկ.։ Ոսկէ բենտը—164 ր. 63 կ. սակարկ.։ Նոր փոխառութիւնը —142 ր. 87 կ.։

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈՓԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն· ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ·

Երկուշաբթի յունվարի 7-ին հասաւ Բաթում «Արմենիա» (Arménie) շոգենաւը, նաւապետ Ժիբուէն (Giboin).

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. ԳԱՐԱՆԵՑՆԻՆ, Թիֆլիսում պ. ՈՒՆՑՈՒՆ, երբեմն Աբծրունի գալերէյ № 103.

3—1.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1885 ГОДЪ.

„РАДУГА“

ТРЕТІЙ ГОДЪ ИЗДАНІЯ.

Еженед. иллюстр. семейный журн. литературы, изящн. искусствъ и общ. жизни.

50 нумеровъ въ годъ.

Въ 1885 году „Радуга“ дастъ своимъ читателямъ рядъ романовъ, повѣстей, разсказовъ и стихотвореній исключительно изъ русской жизни, съ участіемъ выдающихся современныхъ русскихъ писателей.

ИЛЛЮСТРАЦІИ извѣстныхъ русскихъ художниковъ будутъ воспроизведены самымъ тщательнымъ образомъ, съ помощью новѣйшихъ открытій въ области графическихъ искусствъ. Гравюры будутъ исполнены въ лучшихъ русскихъ и иностранныхъ заведеніяхъ.

БЕЗПЛАТНЫЯ ПРИЛОЖЕНІЯ ВЪ 1885 ГОДУ:

СЦЕНА. 25 №№ ПРИЛОЖЕНІЯ: Театральное искусство. Критика. Драматическія пьесы для большой сцены и для любительскихъ спектаклей. Комедіи. Трагедіи. Драмы. Водевили—при участіи извѣстныхъ драматурговъ, какъ Викторъ Александровъ (Крыловъ), Невѣжинъ, князь Сумбатовъ и др. Провинціальная корреспонденція.

АККОРДЪ. 25 №№ ПРИЛОЖЕНІЯ: Новости изъ музыкальнаго міра. Портреты выдающихся современныхъ композиторовъ и исполнителей. Отчеты о концертахъ. Критическія замѣтки. Къ каждому нумеру „Аккорда“ будутъ приложены также безплатно для фортепіано и пѣнія: исключительно новыя пьесы; НОТЫ танцы, аранжировки изъ новыхъ оперъ и оперетокъ.

Въ 1885 году въ журналѣ „Сцена“ будутъ помѣщены ПОРТРЕТЫ русскихъ драматическихъ писателей и выдающихся артистовъ русской столичной и провинціальной сцены.

МОДЫ. 12 №№ ПРИЛОЖЕНІЯ: Иллюстрированныя парижскія моды. Текстъ и рисунки изъ Парижа, подъ редакціею Тіерри. Руководство для туалетнаго стола. Косметика. Домашній обиходъ. Домашнее хозяйство. Столъ.

Въ 1885 году будетъ открытъ новый отдѣлъ:

ГИГІЕНА. Какъ жить здоровому и какъ помочь больному человѣку. Совѣты врача. При этомъ отдѣлѣ открытъ почтовый ящикъ для совѣтовъ. Пользоваться этимъ почтовымъ ящикомъ могутъ лишь гг. подписчики.

Въ 1885 году мы дадимъ НОВОЕ БЕЗПЛАТНОЕ ПРИЛОЖЕНІЕ, въ которое войдутъ

САЛОНЪ. ИЛЛЮСТРИРОВАННЫЯ ОБЩЕСТВЕННЫЯ УВЕСЕЛЕНІЯ: 1) Карты. 2) Общественныя игры. 3) Пасьянсы. 4) Хореографія (танцы). 5) Шарады. 6) Ребусы. 7) Задачи. 8) Фокусы. 9) Эксперименты изъ области химіи и физики. 10) Гимнастика. 11) Спиритизмъ. 12) Обширный шахматный отдѣлъ. 13) Стенографическій отдѣлъ. 14) Почтовый ящикъ для масной корреспонденціи подписчиковъ между собою (право пользованія имѣютъ только подписчики журнала).

ВЕЛИКОЛѢПНАЯ БЕЗПЛАТНАЯ ПРЕМІЯ.

По своему богатому содержанію, обнимающему всѣ явленія общественной жизни, „РАДУГА“ займетъ въ 1885 году, безспорно, первое мѣсто среди иллюстрированныхъ еженедѣльныхъ журналовъ.

Редакція „РАДУГИ“ не жалѣетъ ни расходовъ, ни трудовъ, чтобы сдѣлать изъ своего журнала органъ русской семьи, и только быстро пріобрѣтенная популярность и значительное число подписчиковъ даютъ ей возможность, несмотря на низкую подписную цѣну, настолько увеличить программу журнала.

Въ 1885 году „Радуга“ будетъ выходить аккуратно по четвергамъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА НА 1885 ГОДЪ 5 РУБ., со всѣми приложеніями, съ пересылкою во всѣ города Россійской Имперіи, ТОЛЬКО 3 руб., за границу—7 руб.; ½ года—3 руб., за границу—4 руб.

Допускается разсрочка платежа годовой подписной цѣны: при подпискѣ 2 р., затѣмъ 1 марта 1 р., 1 апрѣл. 1 р. и 1 іюл. 1 р.

Подписка принимается во всѣхъ извѣстныхъ книжныхъ магазинахъ. Гг. иногородныхъ просятъ адресовать: Въ редакцію журнала „РАДУГА“, Москва, Столешниковъ пер., д. Корзинкина.

Редакторъ Д. А. Мансфельдъ.
Издатель Л. Метцль.

5—5.

Дозволено цензурою. Тифлисъ, 9-го Іюваря 1885 г.

Տպարան Ս. Ս. Միխելսոնի ա. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д., № 12.